3765.

Ո՞ՒՄ ՀԵՏ ԵՔ ԴՈՒՔ,
ԳՅՈՒՂԱՑԻՔ...

1919թ.

9(47)"1917"
Կ-36

2011 - 07
24 JAN 2006

№ 21 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 21

*Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!*

Վ. Ա. ԿԱՐՊԻՆՍԿԻ

9

# Ո՛ՒՄ ՀԵՏ ԷՔ ԴՈՒՔ, ԳԻՒՂԱՑԻՔ

## Ո՞ՒՄ ՀԵՏ ԷՔ ԳՆՈՒՄ

## Ո՞ՒՄ ԷՔ ԱՋԱԿՑՈՒՄ

*Թարգմանեց* ՑԱՐ. ՍՈԼՕՎԵԱՆ.

ԳԻՆՆ Է՝ 50 ԿՈՊ.

191

9(47)"1917"
4-36
917"

№ 21 ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՖԵԴԵՐԱՏԻՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ № 21

Գ(ապ) 1917
4-36

Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք!

Վ. Ա. ԿԱՐՊԻՆՍԿԻ

# ՈՒՄ ՀԵՏ ԷՔ ԴՈՒՔ, ԳՈՒՂԱՑԻՔ

## ՈՒՄ ՀԵՏ ԷՔ ԳՆՈՒՄ

## ՈՒՄ ԷՔ ԱՋԱԿՑՈՒՄ

1008
38336

Թարգմանեց ՅԱՐ. ՍՕԼՕՎԵԱՆ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ
ՄՈՍԿՎԱ—1919

20 MAY 2013

Տպարան՝ Կենտրոն. Հայկական Կոմիսարիատի, Մոսկւա, Արմեանսկիյ փ., տ. 2

Типография Центрального Армянского Комиссариата. Москва, Армянск. п. 2

## 1. ՀԱ՞Ց ՏՈՒԷ՛Ք, ՀԱ՞Ց

— Հա՞ց տուէ՛ք, հա՞ց, ճչում է քաղաքը, ուր հացի փայը հասել է քառորդ գրւանքայի, իսկ երբեմն՝ մէկ ութերորդականի։

— Հա՞ց տուէ՛ք, հա՞ց, ճչում են բանւորները ֆաբրիկային վայրերում և գործարանային գիւղերում, ուր հացի երեսը չեն տեսնում երբեմն շաբաթների ընթացքում։

— Հա՞ց տուէ՛ք, հաց—ճչում են չքաւորները գիւղերում, աղերսելով հարստահարիչներից մի փութ սև ալիւր։

Իսկ հացառատ նահանգներում հացը այնքան, որքան որ սիրտդ է ուզում։ Բայց փորձիր դու մտնել ունեւոր գիւղացու խրճիթը և հարցնել՝ հաց կա՞յ։

— Քո՞ ինչ գործն է, կը շշմեցնէ նա քեզ իր բղաւոցով։

— Բայց չէ՞ քաղցածների համար…

— Կորի՛ր դու քո քաղցածների հետ, ինձ համար մի տարի դեռ ես կբաւէ՛։

— Ծախէ՛ք, որքան կարող էք։

— Հազա՛ր ռուբլով էլ չենք ծախի։ Կսպասենք, Մոսկուայից կգան, ծունկ կչոքեն, դեռ գինն էլ կաւելացնեն։

## 2. ՄԷԿԻ ՄՈՏ ԼԻՔՆ Է, ՄԻՒՍԻ ՄՈՏ ԴԱՏԱՐԿ

Եւ սպասո՞ւմ է։ Իրեն ինչ։ Նրա շտեմարանում, դեռ աղալու չտուած ցորեն հարիւր փթերով կայ, որ մնացել է 1917 թ. մինչև իսկ 1916 թւից։

Եւ այդպիսիներ շատ կան։ Այլ տեղերում, չքաւորները հացի կարօտից մաշւել, չորացել են, իսկ այդ մարդիկ նստած են նրա վրայ, ինչպէս շունը խոտի վրայ, իրենք չեն ուտում, ուրիշին էլ չեն տալիս։

Այդ ինչ… աւելի վատ բաներ են անում. հացից օղի են քաշում։ Ամբողջ գիւղեր կան, ուր բոլորն էլ անխտիր սամագոնկա են պատրաստում։

Հենց մի գիւղում միայն սրիկայ սամոգոնկա պատրաստողներ ամէն օր ամբողջ մի քաղաքի օրեկան փայը փչացնում են հարբեցնող թոյն գորձնելով։ Իսկ որքա՞ն այսպիսի գիւղեր կան Ռուսաստանում։

Այդ ի՞նչ է, ա՛յ գիւղացիներ։ Այդ ի՞նչ էք դուք անում։ Ո՞ւր է ձեր խիղճը

Ամբողջ քաղաքներ, ամբողջ գաւառներ քաղցից տառապում են։ Երեխաները քաղցից մեռնում են ճանճերի պէս։ Մայրերը սպառում են, նրանց նայելով մազերն են փետտում։ Ինչպէս որ հողմը բողբոջին, այնպէս էլ քաղցը մարդկանց օրօրում, դէպի գետինն է խանարհեցնում…

Իսկ դուք, սամագոնկա պատրաստում, քէ՞ֆ էք անում։

Դուք լիրբ սամագոնկա պատրաստողներին հանդուրժում էք ձեր մէջ։

Դուք՝ սպեկուլեանտ-արիւնարբուներին հովանաւորութիւն էք ցոյց տալիս։

## 3. ՄԵԽԵՐ ՈՒ ԵՐԿԱԹ

Ինարկէ նախատինքով ամէնքի վրայ չես պրծի, խիղճը չես շարժի։ Վաշխառուն ի՞նչ խիղճ ունի։ Փողի տոպրակն է նրա խղճի փոխարէն։

Հարստահարիչի հետ էլ ուրիշ կերպ պիտի խօսել. ոչ թէ խօսքով, այլ գործով։ Կամքով չէ տալիս հացը, պէտք է վերցնել ուժով։

Բայց չէ որ գիւղում բոլորն էլ վաշխառուներ չեն, հաց ունեն ո՛չ միայն հարստահարիչները, այլև աշխատաւոր գիւղացիները։



Դուք գոնէ, աշխատաւո՛ր գիւղացիներ, պէտք է ձեր սեփական շահը հասկանաք։ Այդ դժւար բան չէ՛։

Գիւղատնտեսական մեքենաներ և գործիքներ, երկաթ, մեխ, ապակի, նաֆթ և ամէն տեսակ հագուստի կտորներ ձեզ ո՞վ է տալիս։ Քաղաքի աշխատաւորը, բանւորը, երկաթուղային աշխատաւորը։

Իսկ դուք նրա՞նց հաց չէք տալիս։ Մի՞թէ բանւորները սուրբ հոգով են կերակրւում։

Նստել ու դողում էք ձեր հացի համար։ Շուտով կնստէք այնչափ, որ վարելու, ցանելու, հնձելու, կրելու, ուտելու և խմելու բան չէք ունենայ։ Հագուստ և կօշիկ չի լինի։ Ստիպւած կլինէք հրաժարւել թէյից, ծխախոտից, շաքարից, այն ամէնից, ինչ որ տալիս է քաղաքի բանւորը։

Բայց այդ փորձանքի կէսն է։ Գործը թէյից, ծխախոտից, շաքարից՝ աւօր-փողից շատ աւելի լուրջ է։ Խնդիրը այստեղ հողին է վերաբերում։

## 4. Ի՞ՆՉ ԷՔ ՄՏԱԾՈՒՄ ՀՈՂԻ ՄԱՍԻՆ

Ի՞նչ էք կարծ մտածում դուք հողի մասին, ա՛յ գիւղացիք։ Համոզւա՞ծ էք, որ ընդմիշտ, յաւիտեան նրա տէրն էք։ Համոզւա՞ծ էք, որ ինքներդ, մենակ կպահէք այն ձեր ձեռքում, որ ոչ ոք ձեռքից չի խլի հողը։

Ափսո՜ս, ձեր յիշողութիւնը վատ է, ընկերնե՛ր։ Մոռացե՞լ էք, որ առանց յեղափոխական բանւորների դուք հողը չէիք տեսնի, ինչպէս ձեր ականջները։

Մոռացե՛լ էք, որ Լվով-Գուչկովի, ժամանակաւոր ագաների կառավարութիւնը, ձեզ հող չտւեց։

Չէ՞ք յիշում, որ սոցիալ-մատնիչների Կերենսկու-Ցերեթելի-Չերնովի քամու հետ շուռ եկող կառավարութիւնը ձեր ախորժակը միայն գրգռեց, բայց հող ձեզ չտւեց։

Հողը և ազատութիւնը ձեզ համար նւաճեցին Կարմիր Պիտերի և Կարմիր Մոսկւայի յեղա-

փոխական բանւորները, հոկտեմբերեան մեծ յեղափոխութեան օրերին։

Նրանք ձեզ համար իրենց արիւնը թափեցին, հազար կեանքեր զոհեցին։

Իսկ դուք նրանց սովամա՞հ էք անում։

Էլ ո՞ւր է ձեր մէջ, թէ չասենք խիղճ, հէնց հասարակ հաշիւը։

Հիմա իսկ, ձեր յեղբայրները չխնայելով իրենց կեանքը, յամառ կերպով կռւում են բոլոր ֆրոնտներում սպիտակ-գւարդիականների՝ Կրասնովի, Դուտովի, Չեխո-սլովակների դէմ։ Ինչի՞ համար են կռւում։ Մեր բանւորա-գիւղացիական հանրապետութիւնն են պաշտպանում, բանւորի ազատութիւնը, գիւղացու հողն են պահպանում նրա թշնամիներից։

Իսկ դուք նրանց հաց չէք տալիս։ Էլ ո՞ւր է ձեր հաշիւը։

## 5. ԱՄԵՆ ՏԵՂ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐՆ ԵՆ ՄԵՂԱՒՈՐ

Հապա՛ մէկ նայէք ձեր շուրջը, թէ ինչ է կատարւում։ Կալւածատէրերը, կապիտալիստները, օֆիցերները, տէրտէրները, հարստահարիչները, աջ-էսէրները, մենշեւիկները, իրենց կաշուից դուրս են գալիս՝ գրգռելով ժողովրդին դէպի ապստամբութիւն։

— Խորհրդային իշխանութիւնը, գոռում են նրանք, խոստացել է ձեզ հաց տալ։ Իսկ ո՞ւր է այդ հացը. ½ ֆունտ. Մի՞թէ ½-ով կարելի է ապրել։ Խորհրդային իշխանութիւնը ձեզ քաղցից կմեռցնէ։

Կարծես թէ իսկապէ՛ս Խորհրդային իշխանութիւնն է սովն ստեղծել։ Կարծես թէ սով չկայ ո՛չ Գերմանիայում, ո՛չ Աւստրիայում, ո՛չ Հունգարիայում, ո՛չ Ֆրանսիայում, ո՛չ ուրիշ երկրներում, ուր, չէ՞ որ Խորհրդային իշխանութիւն դեռ չկա՛յ։



— Այդ բոլորո՞ւմ էլ բոլշեւիկներն են մեղաւոր, գոռում են ամենքին հակայեղափոխականները։ Այդ նրանք են երկիրը սովամահ արել։ Ջարդէ՛ք բոլշեւիկներին, քար ու քանդ արէ՛ք Խորհուրդները։ կազմէ՛ք զեմստւոներ և քաղաքային դումաներ։ Պահանջէ՛ք Սահմանադիր Ժողով։

Կարծես իսկապէս կալւածատիրական զեմստւոները, վաճառականների դումաները և ազնւերի Սահմանադիր Ժողովը կարող են ժողովրդին հաց տալ։ Կարծես թէ կալւածատէրերն ու կապիտալիստները չէին, որ ցարի կառավարութեան հետ երեքամեայ պատերազմով սովի դուռը հասցրին երկիրը։ Կարծես թէ մենշեւիկներն ու էսէրները չէին, որ յանձն առան շարունակել ցարական պատերազմը։ Կարծես նրանք չէին, որ յունիսին զոռով քշեցին զինւորներին դէպի արշաւանքը։ Կարծես նրանք չէին, որ աջակցում և հովանաւորում էին կալւածատէրերին և կապիտալիստներին, մինչև որ վերջնականապէս չքայքայեցին և՛ ռուսական բանակը, և՛ ռուս ժողովրդային տնտեսութիւնը, և ամբո՛ղջ ռուս պետութիւնը։

## 6. ՔԱՂՑԱԾԸ ԳԺԻ Է ՆՄԱՆ

Բայց քաղցածը նման է գժի։ Նա չէ՛ դատում։

Մերթ այս, մերթ այն տեղում, ժողովրդի թշնամիների կողմից յիմարացած քաղցած ամբոխները յարձակւում են Խորհուրդների վրայ։ Այսպէս, օրինակ։ Կորչևի գաւառում կուլակները գիւղացիներին լարեցին Խորհրդային իշխանութեան դէմ։

— Գնացէ՛ք բոլորդ էլ Կորչևի Խորհուրդը ջարդ ու փշուր անելու։ Ով չի գնայ 25 րուբլի տուգանք կտայ։

Եւ գտնւեցին այնպիսի յիմարներ, որոնք հաւատացին ու գնացին։ Այդ դէպքում գործը այդպէս վերջացաւ, որ նրանց բացատրեցին իրենց ամբողջ յիմարութիւնը։ Բայց ահա Սամարայի նահանգի Սեմիոնովկա գիւղում կուլակները կազակ-

ների հետ միասին քար ու քանդ արին Խորհուրդը և մօտ հարիւր հոգի գիւղական չքաւորներ կոտորեցին։

Կրասնոուֆիմսկի գաւառում փախստականները հարուստ բաշկիրների հետ, սպաների և նախկին ուրեադնիկների առաջնորդութեամբ, մի շարք գիւղերում ցրեցին Խորհուրդները և գազանաբար ջարդեցին գիւղական պատգամաւորներին, նրանց աչքերը հանեցին, ձեռները ոլորելով կոտորեցին, երեխաներին կտոր-կտոր արին և բոլորին թաղեցին մի ընդհանուր փոսում, մեռածներին դեռ ևս կենդանիների հետ... Այսպէս ընկան մի քանի հարիւր հոգի։

Հասկանում է՞ք, գիւղացիք, այդ ո՞ւր է տանում։ Իսկ թէ չէք հասկանում, ապա թերևս Ուկրայնան խելքի բերէ։

## 7. ԽԵԼՔԻ ԵՆ ԲԵՐՈՒՄ

Ուկրայնայում բոլշևիկներ չկան.—գնդակահարել, գազանի նկուղներն են քշել։ Ուկրայնայում Խորհուրդներ չկան՝ ցրել են։ Ուկրայնայում հացի համար կայուն գին նշանակած չէ, ազատ առևտուր է։ Ապա ի՞նչ կայ Ուկրայնայում դրա փոխարէն։

Նստել է այնտեղ ինքնակալ ցարի նման նախկին ցարի գեներալ գետման Սկորոպադսկին, ուղարկում է նա երկրի բոլոր ծայրերը պատժող գործախմբեր, գիւղացիների ապստամբութիւնն է ճնշում։ Նա հողը խլել է գիւղացիներից և վերադարձրել կալուածատէրերին։ Ահագին տուգանքներ է բարձել գիւղացիների վրայ՝ կալուածները քանդելու համար։ Կարծես թէ աւելով սրբել են հացը գիւղացիներից. վերջին հաւը, վերջին խոզը խլել են նրանցից։ Նստեցրել իրենց հին տեղերում զեմսկիյ նաչալնիկներին, ոստիկանապետներին, ժանդարմերին։ Մի խօսքով վերականգնել են ցարական բոլոր կարգերը։

Իսկ Վիլնայի նահանգում, ուր նոյնպէս ոչ մի Խոր-



հրդային իշխանութիւն չկայ, վերականգնած է աղաների համար բանելու սովորութիւնը, ինչպէս որ սրանից 50 տարի առաջ ճորտատիրութեան ժամանակ։ Այնտեղ քշում են գիւղացիներին բանելու մինչև ուժասպառ լինելը, շաբաթ երեք օր գերմանացոց հսկողութեամբ կալուածատէրերի արտերում, կալուածատէրերի անտառներում։

## 8. ՔԱՂՑՈՎ ԵՆ ՈՒԶՈՒՄ ՎԵՐՑՆԵԼ

Տեսէ՛ք, թէ բանը ուր է հասել արևմտեան Սիբիրում, Ուրալում և Սամարայում։ Այնտեղ կալուածատէրերը, կապիտալիստները, աջակողմեան էսէրները և մենշևիկները յուզել և ոտքի են հանել չեխօ-սլովակների գնդերը, նրանց միջոցով տապալել են Խորհրդները մի շարք քաղաքներում և անուանել են իրենց «Ժամանակաւոր կառավարութիւն»։ Ապստամբները՝ սպիտակ-գուարդիականները և չեխօ-սլովակները անխնայ ոչնչացնում են Խորհրդների իշխանութեան բոլոր կողմնակիցներին՝ Կարմիր բանակի զինուորներին, գիւղական և բանուորական պատգամաւորներին։ Նրանք վերականգնել են քաղաքային ինքնավարութիւնները՝ հարուստ և ունևոր մարդկանցից կազմուած. Նրանք հողը վերադարձրել են կալուածատէրերին և պահանջում են Սահմանադիր ժողովի գումարումը, այն ժողովի, որ յունուարին հրաժարուեց ընդունել բանուորների և գիւղացիների պահանջները։

Նրանք առժամանակ կտրել են Սիբիրի հացառատ նահանգների ճանապարհը և քաղցով ուզում են վերցնել Խորհրդային հանրապետութիւնը։

Նայէ՛ք դէպի Դոնը։ Այնտեղ գեներալ Կրասնովը, որին մի ժամանակ վեհանձնօրէն արձակեցին յեղափոխականներն՝ ազնիւ խօսք առնելով նրանից, որ յեղափոխութեան դէմ չի գնայ, ապստամբուեց սպիտակ-գուարդիականների հետ, տապալեց Խորհուրդները և գազանաբար հարիւրներով ոչնչա-

ցնում է բանւորներին և գիւղացիներին։ Նա իր իշխանութիւնն է յայտարարել Դոնում և բացարձակ յայտարարում է, թէ պիտի գայ Ռուսաստանում վերականգնելու ցարի իշխանութիւնը։

Կրասնովն աշխատում է կտրել հացառատ Կուբանից հաց բերելու վերջին ճանապարհն ևս և նոյնպէս սովով վեր-ցնել Խորհրդային հանրապետութիւնը։

## 9. ԱՊԱ Ո՞ՒՄ ՀԵՏ ԷՔ, ԴՈՒՔ, ԳԻՒՂԱՑԻՆԵՐ

Լենինի՞, Տրոցկո՞ւ, Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի՞, բանւորների, գիւղացիների, զինւորների և կազակների պատգամաւորների Խորհրդների Համառուսական Կենտրոնական Գործադիր Կոմիտէի հետ, թէ՞ Կրասնովի, Դուտովի, Սեմեօնովի, չեխօ-սլավօն աւազակների, ցարի գեներալների, եասաուլների, սպաների, կալուածատէրերի կապիտալիստների հետ։

Ո՞ւմ կտաք հացը. ընտրէ՛ք։

Ձեր հարազատ բանւորա-գիւղացիական իշխանութեան, ձեր սեփական Խորհրդների՞ն, թէ ագահութեամբ լեցւած կպահէք այն բուրժուազիայի, ցարի գեներալների և զինւորների համար։

Եթէ կարող էք ձերոնցը տալ, ապա շտապէք, դանդաղել չի կարելի և ոչ մի վայրկեան։ Վերցրէք հացն իրանց բոլորից, որոնք աւելորդ ունեն, և տարէք Թափելու կենտրոնական շտեմարանները։

Եթէ կպահէք աշխատաւոր ժողովրդի վաղեմի անիծւած թշնամու համար, ապա ինքներդ ձեզ մեղադրէք, ձեզ հետ էլ նոյնը կլինի, ինչ որ Ուկրայնայի հետ։

Կը խլեն ձեր ձեռքից հացն էլ, հողն էլ. կոչնչացնեն գիւղերը Թնդանօթների կրակով. անհաշիւ մարդ կը կոտորեն մինչև որ կը նստեցնեն ձեր վզին ցարի իշխանութիւնը։

---

*Հայաստանի Կոմմունիստական Կուսակ. հրատարակութեամբ լոյս են տեսել*

1) Ռուսաստանի Կոմմունիստական Կուսակցութեան (Բոլշևիկների) ծրագիրը:
2) III Ինտերնացիոնալի Պլատֆորման:
3) Ն. ԼԵՆԻՆ. «Թէզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին»—գինը՝ 50 կոպ.
4) «Հայաստանի Կոմմունիստական Կուսակցութեան Ներկայացուցիչի զեկուցումը III կոմմունիստական Ինտերնացիոնալին»—գինը՝ 60 կոպ.
5) «Կոմունիստական Ինտերնացիոնալի Մանիֆեստը ամբողջ աշխարհի պրոլետարիատին»—գինը՝ 1 ռ.
6) Ն. ԼԵՆԻՆ. «Երրորդ Ինտերնացիոնալի տեղը պատմութեան մէջ»—գինը՝ 1 ռ.
7) Ն. ԼԵՆԻՆ. «Ի՞նչ պէտք է լինի մեր կուսակցութեան անունը»—գինը՝ 50 կ.
8) ՊԱՆՆԵԿՈՒԿ. «Թալանի Բաժանումը»—գինը՝ 1 ռ.
9) ԿԱՐԻՆԵԱՆ. «Իմպերիալիզմ և Արմէնիա»—գինը՝ 3 ռ.
10) «Կարմիր Աստղ»—գինը՝ 5 ռ.

*Հայկական Գործերի Կոմիսարիատի հրատարակութեամբ լոյս են տեսել*

1) Ռ. Սոց. Ֆեդ. Խորհուրդների Հանրապետութեան Սահմանադրութիւնը:
2) Ն. ԼԵՆԻՆ. «Նամակ Ամերիկեան բանւորներին»—գինը՝ 1 ռուբ.
3) Վ. ՖՐԻՉԷ. «Պրոլետարական պոէզիան»—գինը՝ 2 ռ.
4) ԶԻՆՈՎԻԵՎ. «Բեսանից յետոյ» (Զեկուցում Խորհուրդների 5-րդ Համագումարին)—գինը՝ 1 ռ.
5) ՆԵՐՀԱԿ. «Դէպքեր Բագւում, Հ. Յ. Դաշնակցութիւնը և Բագւի Խորհրդային Իշխանութիւնը»:
6) Ն, ԼԵՆԻՆ. «Կարլ Մարքս» (Համառօտ կենսագրութիւնը և Մարքսիզմի շարադրութիւնը)—գինը՝ 1 ռ. 50 կ.
7) ՆԵՐՀԱԿ. «Ռուսական Յեղափոխութիւնը և պրոլետարիատի տակտիկան»—գինը՝ 1 ռ.
8) Ն ԲՈՒԽԱՐԻՆ. «Կոմմունիստների Ծրագիրը»—գինը՝ 3 ռ.
9) Մ. ՊԱՒԼՈՎԻՉ (Վելտման) «Ասիան և իր դերը համաշխարհային պատերազմի մէջ—գինը՝ 3 ռ.
10) ԿԱՐԼ ՌԱԴԵԿ. I «Կոմմունիստական Կուսակցութիւնը Գերմանիայում». II. «Կարլ Լիբկնեխտ» (Լիբկնեխտի նկարով)—գինը՝ 1 ռ.
11) «Խորհրդային Կառավարութեան նոտան Վիլսոնին»—գինը՝ 75 կ.
12) «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրութիւնը»—գինը՝ 2 ռ.
13) Հ. ՅՈՎՍԷՓԵԱՆ. «Դէպի քաղաքական կռիւ»:
14) Գ. ԶԻՆՈՎԻԵՎ, ՅՈՒ. ԿԱՄԵՆԵՎ և Լ. ՏՐՈՑԿԻ—«Ն. ԼԵՆԻՆ» (Վլադիմիր Իլիչ Ուլեանով)—գինը՝ 2 ռ.
15) Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. ԷՆԳԵԼՍ «Կոմմունիստական Մանիֆեստ»—Պլեխանովի, Կաուցկու և հեղինակների առաջաբաններով—գինը՝ 3 ռ.
16) Պ. ԼԱՖԱՐԳ «Տնտեսական Էւոլիւցիան և Կոմմունիզմ»—գինը՝ 50 կ.
17) ԿԱՐՊԻՆՍԿԻ. «Ի՞նչ բան է Խորհրդային Իշխանութիւնը և ինչպէս է նա կազմւում»—գինը՝ 2 ռ.
18) «Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնը»—գինը՝ 3 ռ.
19) Վ. ԿԵՐԺԵՆՑԵՎ. «Ինչպէս վարել ժողովը»—գինը՝ 2 ռ. 50 կ.
20) Կ. ԵՐԵՄԵԵՎ. «Սոցիալիստական Խորհրդ. Հանրապետութիւն»—գինը՝ 1 ռ.
21) ԿԱՐՊԻՆՍԿԻ «Ո՞ւմ հետ էք դուք, գիւղացիք»—գինը՝ 50 կ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0411605